

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

„Миръ Божіи“, նույն բերքի Եմս-
գրի այս համարում տպւած է առա-
յալանի թարգմանիչ-բանաստեղծ
Պետր Վէյնբերգի լողաւածը գեր-
մանական բանաստեղծ Լեննաուի
ժննդեան հարիւրամեակի առիթով:
Յանձին Լեննաուի գերմանական բա-
նաստեղծութիւնը պատուած է իր
ամենախառն լիրիկ բանաստեղծ-
ներից մէկին, Գէթթէից և Հէյնէից
շնորհ: Լեննաուի իսկական անունն
է Նիմաշ ֆոն-Ստերլինգաու, իսկ կեղծ-
անուն (պսևդոնիմ) նա ընդունել
է, ի նկատի անենալով մետաքս-
լիրիկան Աւստրիայում այն ժամա-
նակուայ տիրող գրաքննչական
կնարկերն և խտուրթիւնները: Լե-
նաու ծնունդ է 1802 թ. պոստուսի
13-ին անգարական Տրադաու քա-
ղաքում մի ազգատ և ցաւագար ըն-
տանի քում: Բանաստեղծի կեանքը
թափառումների, զրկանքների, տի-
րային անաջողութիւնների և տան-
ջանքների մի տխուր շարք էր: Այդ
անեղբայրական պայմաններում նա չէր
կարող կենսաւորաւ երգիչ լինել և
նրա վշտաւ լարերից լուսւմ են
„նիւկերական վշտի“, մենակ, զր-
թախ և խորտակուած արտի հեծե-
ծանքներ, պատած լրամեամիցմի,
միտոյցիզմի մշուշով, լի թերա-
հաւատութեան և վառ հաւատի խոր
մաքառումներով: Բազմաթիւ մանր
բանաստեղծութիւններից և բոմանա-

ներից բացի նրա աւելի խոշոր
գործերն են „Պատառ“, „Յովանա-
լաւա“, „Այրիգոյցիներ“, այդ բո-
լորի մէջ նա գնում է իր ներքին
սուրբեկութի աշխարհը: Գծաթառ բա-
նաստեղծը 42 տարեկան հասակում
հոգեպէս հիւանդացաւ, խելագա-
րուեց, և 1850 թ. պոստուսի 22-ին
թոյնց այս վշտալի աշխարհը:

„Հանդէս Ամստերդամ“, նույն-
բերքի, — ԾԳ. միջազգային արեւելա-
գէտների համաժողովում բաւական
հարուստ է եղել հայկական բաժի-
նը: „Հանդէս“ այս համարում տը-
պուած մի թղթակցութիւնից բա-
ղւած ենք հետեւեալ հետաքրքրական
կտաւը:

Արաբայի երեսոյթ է տեսնել,
որ վերջին տարիները շարունակ
փորձեր են լինում եւրոպական
գիտնականներից՝ պարզել Հայերի
մասը պատմական անցեալը, խոն-
դիրներ, որոնք մեղանից երկու
տասնեակ տարի առաջ տնջումն էին
թուով գիտութեանն, այժմ
շնորհիւ նորոգոր ազգիւնների միան-
գամայն այլ լուսաբանութիւն են
ստացել: Ահա թէ ինչու պիտք. Լե-
նաուի լուսաբարած գրաախօսու-
թիւնը՝ Հայերի տանջին զայտեան
մասին՝ գրուել էր շատերի հետա-
քրքրութիւնը, սակայն երիտասարդ
ուսուցչապետը, հետո ձեռնով պատ-

մական փաստերից, շարունակ ծանրանում էր իր ենթադրութիւնների վրայ: Ընդունելով Winckler-ի տեսութիւնը, թէ Կիմմերներ Հայաստան են մտած, անցնելով նախ Կովկասեան լեռնաշղթան, որի հետեանքը պէտք է լինէր «Խալդիալի» (ըստ Լէմանի նոյն Ուրարտու երկիրն է) երկու մասերի բաժանուելն, պ. պրօֆ. Վլեքերի ճանապարհի հետքերն արեւմտքում է որոնում. Փրակիալից անցնելով Փոքր Ասիա, նրանք մի ժամանակ նստած են եղել Փոխզիպում, ինչպէս ապացուցանում է տեղիւս Արմեն ի ո ն քաղաքի անունն. ուստի հասնական է ընդունել, որ Հայերը և Փոխզաղիք ազգակից են միմեանց: Միւս կողմից Օրմենի ու մ (ըստ Լէմանի՝ Արմենիում) քաղաքի գոյութիւնն Փնստաղիալում ենթադրել է տալիս, որ Հայերը, կամ նրանց մի մասը, այստեղ ետ բնակած են եղել: Այսպիսով Հայերը Կիմմերների հետ ոչ մի կապ չունեն, այլ եկած են Փոքր Ասիա դեռ աւելի վաղ, Ռուսաս. Ա. և Բ-ի ժամանակ (այսինքն մօտաւորապէս 722—680 թ.): Սակայն Հայաստան մտան արդէն խառնուած ալլ աղդերի հետ. գաղթումն տեղի է ունեցել առնուազն երեք անգամ՝ ա. Հայերը սկզբում ուղղին նոր երկիրը իբրեւ անխառն ազգութիւն. բ. նստան Փոքր Ասիայում թրակացիների հետ արդէն ձուլուած. գ. Հայաստան եկան Հետտիւրների հետ խառն... (այստեղ երիտասարդ գիտնականը բառական հեռու է գնացել իր ենթադրութիւններում): Իբրեւ ապացոյց պ. Լէման ստաջ բերեց իւր անձնական դիտողութիւնն Կովկասում եղած ժամանակ՝ Հայերը ըստ մեծ մասին տարրերում են միմեանցից իրանց արտաքին գծադրութեամբ: Վերջապէս, արդարացնելու համար հալաղ անունն, որով նա մկրտել է Ուրարտու երկիրն եւ

ազգն պ. պրօֆ. մատնացոյց է անում Քսենոփոնի մի տեղեկութեան վրայ, թէ «Խալդերը պահուել էին լեռներում»:

„Кавказъ“ №303. Այդ լրագրում տպագրուած է Վրաստանի էկզարխ Ալէքսի արքեպիսկոպոսի Երևանի նահանգում և Կարսի շրջանում կատարած ճանապարհորդութեան նկարագրութիւնը: Այդ նկարագրութեան հեղինակ սապ քահանայ Վաստորգովլի, ի միջի ալլոց, գրում է հետեւալը. «Նոյն օրը, (սեպտեմբերի 28-ին) հովուապետը այցելեց Ալեքսանդրօպօլի բոլոր զինուորական եկեղեցիները և մերձակայ Ալեքսանդրօպօլի գիւղում մի եկեղեցի հիմնեց ռուսադասնութիւն ընդունած հայերից նոր կազմուած համայնքի համար: Հայերի մէջ շարժումը ղէպի ռուսադասնութիւն սկսուել է 20 տարի առաջ. նա կենդանի է և հիմա, և եթէ չը լինէին կեանքի աջն ճնշող հանգամանքները, որոնց մէջ ապրում են ռուսադասնութիւն ընդունած հայերը, որոնք մնում են նոյն գիւղերում իրանց նախկին հաւատակիցների հետ և ամեն տեսակ անախորժութիւններ են կրում նրանցից՝ ալլ շարժումը լայն ալիքի նման կը տարածուէր Երևանի նահանգում: Հասարակ ժողովուրդը չը գիտէ այն տարբերութիւնը, որ կայ հայ-լուսաւորչականութեան և ռուսադասնութեան մէջ, և իսկապէս էլ նա այնքան մեծ է, որ անանցանելի անդունդ դառնար: Անդունդ կամնում են դարձնել նրան քաղաքականութեամբ պարապող տարրերը, զինուորապէս ինտելիգենցիայից, բայց ժողովուրդը գործ չունի նրանց հետ: Վերջին ժամանակ կաղմուել են մի քանի ծխեր ռուսադասնական հայերից. նրանց համար ժամերգութիւն է կատարում. բացում են ուսումնարաններ: Աղմինխտարացի-

ան հասարակ համարեց առաջադասել հայերին դուրս հանել իրանց նախկին անգիրքից և կազմել առանձին գրագիր։ Առաջմէ կազմեալ են Ալէքսանդրապօլիս և Ագիճն գրագիրը։ Թագաւոր Նալբաշ Եր առաւանձեանաթեամբ 5,000-ական սուրբի նախքից՝ եկեղեցիք—առանձնաբաններ կառուցանելու համար այդ գրագիրքում։ Վրաստանի էկզարքը հասաւ Ալէքսանդրապօլիս երեկոցեան համբ հին և երկար խոսակցեց առաւանդաւ հայերի հետ հետ։ Ասաց քահանայ Վաստարգոյ, Վրաստանի էկզարքի լաւնարութեամբ, քարոզ խոսեց մաղափարին ա. Գրիգորի, հայերի լուսաւորչի կեանքի մասին, և պարզեց այն միտքը, թէ ա. Գրիգորը ապրում էր այն ժամանակ, երբ հայերը բաժանուած չէին ուղղափառ եկեղեցուց, և թէ իսկական գրիգորեաններ՝ համախոհ Լուսաւորիչ Գրիգորին, իրաւացի կերպով կարող են անուանուել հայերից նրանք, որոնք ընդունել են առաւանդաւթին։ Արտօնեալ այդ երեկոյն սեպտեմբերի 30-ի նախընթաց երեկոյն էր, երբ առաջ եկեղեցին տանում է. ա. Գրիգորի, Մեծ Հայաստանի Լուսաւորչի լիշատակը, ուստի այստեղ էլ մաղթանք կատարուեց այդ սուրբի լիշատակին և տանար էլ հիմնուեց նրա անունով։ Ջուղաղիպութիւնը զարմանալի էր։ Աստուած, որ ա. Գրիգորի ազգթքներով անի հայերի առաւանդաւթ հետ։ Ջարմանալի է, որ մի առանձին պետական հեռաւանդաթեամբ դեռ ևս Դոստն Գրազնին առաջին անգամ Մակուայումը, Վասիլի Յլամենիւն տանարում, կանգնեց մի սեղան հայերի Լուսաւորիչ՝ ա. Գրիգորի անունով։

—

„Вѣстникъ Европы“ Մերիս Մէտէլինկի պիէտի մասին. որի հայերէն թարգմանութեան վերջը տպուեց

„Մարմի“ այս համարում, նկատույ կարծիքն է լայնում։ Ասա անադրի աշխատակցութիւն Է. Վ. որ լայնի է իրեն երազական գրականութեան հետ անն. “Մարիս Մէտէլինկի նոր գրումն, —ասում է նա, —որ նախքան մեծ լայնութեամբ ներկայացուեց Պարիզում և այնուհետ Լոնդոնում, այժմ հրատարակուել է առանձին գրքովով (Ֆրանսերէն) և շնորհաւորութեան կազմից ընդունուել միամտեալ գովասանքներով։ Մէտէլինկի, որ մինչև այժմ գրում էր իր նշխարային ու միտքական մշտնջողութեամբ անկախութեանը զննաւորակների առանձնացած խմբակի համար, իր այս նոր գրումայով դիմում է, այսպէս ասած, մեծ հասարակութեանը, վերջին տարիներս Մէտէլինկի թողել է իր սեղանական գրաւ սիմֆոնիստական ձևերը և բարդագէտ է դարձել ու սեղան է քարոզել նոր դիրքերում։ Չէ պիտի կեանքը... Եր փիլոսոփայութիւնը նա մեկնում է շափաղանց պարզ ու լուսնաւորակ կերպով, գրեթէ միամիտ ու պղտորում բանաստեղծական լեզուով։ Նայն պարզութիւնը նա ապում է այժմ մտցնել նաև իր գեղարուեստական անկախութեան մէջ։ “Մանա Վաննա, առաջին փորձն է այդ տեսակում։ Նրա նախկին գրումաճքներին լատուկ՝ անլայն երկիրներ ի մշտնջողութեամբ արքայապետարիւր, տարաշխարհային զգացմունքները և նախազգացմունքների ու խորախորհուրդ գաղտնիքների աշխարհի կեանքը այդ նոր գրումայում փոխարինում են XV դարի գրաւ իրական, կրքոտ խոսուցիներով. գրումայում կատարուող զեպերը շափակի են ու հասկանալի, կրքերի մաքրումով կրում է գրաւ երկրային, համամարդկային բնաւորութիւն։ Մէտէլինկի նախկին գրումները տարբերակ տպաւորութիւն էին գործում իրանց շինում։ միամտու-

թեամբ, միևնույն նախադասութիւնների բազմանուագ կրկնութեամբ. գործող անձինքը կարծէք լուսնոտներ լինէին, խուլ ղէպի տմեն ինչ, որ շրջապատում է իրանց, ամբողջ ուշ ու մտքով զրաւում իրանց տրխուր մտածմունքներով և զարմացած աչն բոլորից, ինչ որ տեսնում ու զգում են. «Մօննա Վաննայում», ոչ մի հետք չի մնացել այդ բոլորի մէջ զրամայի լեզուն կրքոտ է ու հուժկու, բանաստեղծական՝ առանց սեթևեթութեան (мажорность) և արտայայտում է ողբերգական զգացմունքների թափը առանց որևէ մշուշապատութեան. մի անգամ Մէտէոլինկը ստեղծել է լիովին բեմական մի բան, մի դրամա շէքսպիրեան ոգով, պարզ ու ցնցիչ, կատարելապէս մարդկային և միանգամայն լի խոր փիլոսոփայական իմաստով. Մէտէոլինկը միշտ առանձին հակումն է ցոյց տուել ղէպի Շէքսպիրը. Հենց առաջին դրամաներից չէտոյ նրան սկսեցին անուանել «Բէլգիական Շէքսպիր», նրա առաջին՝ դրամաներից մէկը, «Princesse Maleine», ամբողջապէս կազմուած է միստիկական անուրջների աշխարհը տեղափոխուած շէքսպիրեան մօտիվներից. «Մօննա Վաննայում», ընդհակառակը, դրամայի նիւթը բոլորովին ինքնուրոյն է, բայց կրքերը վերարտադրելու եղանակը շէքսպիրեան եղանակ է... Իր գեղարուեստական արժանատւութիւններով Մէտէոլինկի նոր դրաման թերևս նրա գրած ամենալազ դրամաներից մէկն է իւր բնատուրութիւնների պաշտառութեամբ ու ցայտունութեամբ, տրամախօսութեան (դիալոգ) կրքոտութեամբ և ոճի անդիմադրելի բանաստեղծական հրապոյրով...»

«Научное Обозрение», սեպտեմբեր. Ռուսաց «Գիտական հանդէսի» խմբագիր Ֆիլիպպովը այդ ամսագրի սեպտեմբերի համարում մի

լուրջ լօղում է նուիրել Մօրիս Մէտէոլինկին. Բերում ենք մի քանի հետաքրքրական հատուածներ այդ լօղումից. «Մի քանի տարի առաջ Ռուսաստանում Մէտէոլինկով հետաքրքրուած էին միայն ղէկաղէնտները, Գննադատներից գրեթէ միայն տիկին Վենգերովան, որ միշտ ուշի ուշով հետևում է նոր հոսանքներին, մատնացոյց արեց Մէտէոլինկին, իրրև խոշոր և ինքնուրոյն զրականագէտի. Սակայն պէտք է ասել, որ մենք այդ ղէպում շատ էլ չեա չենք մնացել. Արևմտեան Եւրոպայից, աչնուղ էլ Մէտէոլինկի գրուածքները սկզբում միմիայն տարակուսանք զարթեցրին. Ֆրանսիացի քննադատ Ռընէ Դումիկը 1896 թուին գրում էր, թէ՛ «Երկու-երեք տարի առաջ մեզնում չայտնագործեցին Մէտէոլինկին», Մէտէոլինկը բէլգիացի է և նրա առաջին գրուածքները Պարիզում չեն տպուած, իսկ չափնի է, թէ որքան դժուար է Ֆրանսիա մուտք գտնել աչնպիսի գրողի համար, որ չի պատկանում Պարիզի զրական շրջաններին. Միմիայն բացառիկ տաղանդը կամ գոնէ բացառիկ ինքնուրոյնութիւններն են կարողանում ազդպիսի ղէպքում ճանապարհ բանալ իրանց համար. Ոչ-պարիզեցի գրողին սաստիկ խանգարում է դատացիութեան կնիքը, որ անկասկած չատուկ է Մէտէոլինկի առաջին գրուածքներին. Սակայն այդ առաջին շրջանի գրուածքները մշուշապատ ու միատիկական բովանդակութիւնը չէր կարող արգելք լինել նրանց տարածուելուն. Նատուրալիզմի և պօզիտիվիզմի դէմ սկսուած հակընթացքը (ռէակցիա) արդէն իր անելիքն արել էր ութսունական թուականների մէջերէին, իսկ հետեւալ տասնամեակում, «դարավերջում», բազմացել էին խիստ հակապօզիտիվական բնատուրութիւն ունեցող հոսանքներ. Մէտէոլինկի

երբեմն արժեքավորում է անհայտնությունը ևն կրող գաղափարների խրատման նախորդ քառասուն պատերազմի նոյ կար արդեն չնարչն ֆրանսիացի գաղափար անասի արժեքի թանկերի և զեկաղենաների, որանք խելայինն Մեկտեղիներին իրանք բանակի գրող նշանակեցին... Նորքա միայն Մեկտեղիները խառնի գաղափար նախորդակցեան լայն խառնիքն և այն իրեն գրամատարաց նա խելական նախանշողական նշանկ առաջադա Մանուսկրիպտի լայն անանիայց չնառն Մենք եւ ըստքեր ենք գնահատում այդ պիւր, թէպէտեւ շափաղանցութիւն ենք նախորդում նրա նախնադասութիւնը Եւրոպայի գրամաների նեւ... Մեկտեղիները գրամաները գեղարուսեանական լուսարանութիւն են նրա ինքնաբերական փխտափայտութեան... Բայց իրք խառն և իրք ինքնաբերական մասնագիտների նրան, — Սպէնսեր լինի նրանց անանիւր, թէ Դարվին, Մարքս կամ Տայաս, — Մեկտեղիները, թէպէտեւ ոչ այնքան խառն, որքան այդ մասնագիտները, նախ և առաջ լուսանախան նշմարաւթեան որանոց է նրանց բոլորի նման, Բայց զեկափարող մասնագիտների նման նա մասնաւոր է հոգով՝ և ամենից առաջ գրաւում է մեզ իր անկեղծութեամբ:

Այդ կողմից չը կայ բանակների և ուղղութիւնների տարրերութիւնը. բնականապէս բոլոր խոր աշխարհայեացքների սինտէզը կայանում է նրանում, որ նրանք բոլորն էլ այս կամ այն ձևով ձգտում են հաստատուն երկրիս երևոյն ճշմարտութեան և արդարութեան թաղաւորութիւնը և հետևաբար այս կամ այն ձևով ծառայում են մարդկութեան բարբորութեանը. Բացի այդ բնականորէ գծից, որ Մեկտեղիներին մատկցում է մաքի միւս իշխաններիին, նրա մնացեալ բոլոր լատկութիւնները բոլորովին ինքնաբերական են. Նախ և առաջ պէտք է

լինի նրա քննադատութեան առաւոր մեղմութիւնն ու ընդհատութիւնը... Մեկտեղիները մէկ կողմից որ պատանկական, նայեթիք մանկական միամտութիւն, որ առկայն չի խանգարում նրան թափանցել մարդկային նպատակներուառաւոր խորքերը... Նրա նպին պարզ է ու վերտ, ինչպէս մի քիթիցը Պետք է լին նայել զեպի նեւտ անցեալը և մաքով անգաթիւսել միմադարեան վանքի խաղող խաղը, — ոչ այնպիսի վանքի, որպիսին մեծ մասամբ գաղութիւն ունէր իրապէս... — Այնպիսի վանքի, որը կողմում էր այն մամանկաւոր թաղաւորութեան իշխումը, որպէս զի մաք կարողանայ հաղթանայ այն տրամադրութիւնը, որ սիրապետող է հանդիսանում Մեկտեղիները մէկ... Բայց որքան ասելի ենք ծանթանում Մեկտեղիները գրամաների նեւ, այնքան ասելի ենք համարում, որ համակում լինելով XIV կամ թերեւս նայն-իսկ IV դարի տրամադրութիւներով, Մեկտեղիները մինեւոյն մամանկ կանգնում է իր մամանկակից մաքի բար-ծանքների վրայ և այնպիսի անանում է այնքան հեռուն, որ նրա աշքի առաջ այժմեան թացում են այնպիսի հարկաններ, որանք մատչելի կը գտանում միմայն մեր հեռաւոր սերունդների հայեացքին... —

«Մօսկ», №№ 240, 241, 242, 249, խառնով հալող տառերի գիւտի և Մեքաղ Մալադի գործունէութեան մասին, պ. Սա. Մալխասեանը լայնում է այն համակրելի միտքը, թէ անհրաժեշտ է այդ մեծ մարդու և նրա կատարած մեծ գործի առաջիկայ հաղար հինգարիւրամեալ իշխատակը լուսեթացնել մի որ և է պատկար ձեռնարկութեամբ. Նր կողմից այդ լոգաւածների հեղինակը առաջարկում է այդ նպատակով

հրատարակել լիստն հայ պատմագիրներ զրաբար լեզուով՝ «պատմագիրք հայոց» ընդհանուր վերնագրի տակ։ Այդ առաջարկության առիթով, «Մշակի» № 249-ում պ. Ա. Ահարյունեանը, խիստ համակրելի գրությունով Մեսրոպի իշխատակը և հայոց տառերի գիտը լուսբանները միտքը, իրապես կերպով գրություն է, որ զրաբար լեզուով լիստն պատմագիրներ տալը հայ հասարակության՝ ժամանակակից պահանջներին անհամապատասխան է։ պ. Ա. Ահարյունեանը կամենար, որ ձեռնարկովից հրատարակութիւնը ինչ և լինէր՝ անպատճառ հայ ժողովրդի մեծամասնութեան համար լինէր, ծագայէր լայն ընթերցանութիւն, մինչդեռ զրաբար մատենագիրները այդ կարեւոր պակասը չեն կարող լրացնել շատ հասկանալի պատճառներով։

Անշուշտ, սկզբունքով դէմ չենք հայ մատենագիրների զրաբար հրատարակութեան, եթէ այդ անի մի անհատ իր սեփական միջոցներով, սակայն երբ հարց է դնում, թէ Մեսրոպի իշխատակը իրապէս չարգելու համար հասարակական ի՞նչ ձեռնարկութիւն աւելի համապատասխան կը լինի մեր ներկայ պայմաններում և արժանի այդ մեծ պատմական անցքի իշխատակին և երբ հասարակական օժանդակութեան հարց կայ մէջտեղ—մենք մի քանի տասնեակ գրասէրների և մասնագէտների շահերից վեր կը համարենք հայ ամբողջ ժողովրդի մտաւոր պահանջները։ Ասանց այն էլ հնաթիրութիւնը և նեղ մտքով վերցրած բանասիրութիւնը մեր գրականութեան մէջ գերաճման է հասել. թողնենք Վիէննայի, Վե-

ներտի, Էջմիածնի, էլ չենք առում հալագիտութեան կաթիլդառ ունեցող եւրոպական համալսարանների գիտնականներին, շարունակել իւրանց նեղ մասնագիտական զբաղմունքները, թող նրանք իրանց միջոցները (բաականաչափ ունեն) հին պատմագիրների ուսումնասիրութեան և հրատարակութեան վրայ զործադրեն, իսկ հասարակութեան միջոցները աշխատենք գործ դնել մեր ժողովրդի լայն պահանջների համար։ Միթէ աւելի լաւ չէ՞ օրինակ, հաւաքական ոլժերով ձեռնարկել մի այնպիսի հրատարակութեան, որ ժամանակակից գիտութեան վրայ հիմնուած և ընդհանուրին մատչելի լեզուով, մաք-մաք տար հայոց գրականութեան և անցեալի պատմութիւնը։ Դրա համար ևս, անշուշտ, հարկաւոր է կազմակերպել մի խմբագրութիւն, որ կը դիմի մասնագէտների աջակցութեան։ Եւ Մեսրոպի իշխատակի տեսակէտից ի՞նչ պատուաւոր և վեհ գործ կատարուած կը լինէր։

Երբ մի Մանթաշեան իր սեփական միջոցներով ուզում է Պարիզում հայոց եկեղեցի շինել, այդ, ի հարկէ, նրա գիտնալու բանն է, սակայն եթէ նա այդպիսի ձեռնարկութեան համար հասարակութեան զիմէր, մամուլի պարտականութիւնը պէտք է լինէր հասարակութեան գոյց տալ, որ աւելի անհրաժեշտ կարիքներ ունենւր... Այդպէս է և ներկայ հարցում։ Ցանկալի կը լինէր, որ իսկապէս ինքը հասարակութիւնը ևս լուրջ մտածէր մի աւելի նպատակալարմար ձեռնարկութեամբ լուսբանները մեծ Մեսրոպի իշխատակը։